

**WEAPONS**

**Proliferation**

**Agreement Between the  
UNITED STATES OF AMERICA  
and ARMENIA**

Signed at Washington and Yerevan  
September 3 and 16, 2010



NOTE BY THE DEPARTMENT OF STATE

Pursuant to Public Law 89—497, approved July 8, 1966  
(80 Stat. 271; 1 U.S.C. 113)—

“ . . .the Treaties and Other International Acts Series issued under the authority of the Secretary of State shall be competent evidence . . . of the treaties, international agreements other than treaties, and proclamations by the President of such treaties and international agreements other than treaties, as the case may be, therein contained, in all the courts of law and equity and of maritime jurisdiction, and in all the tribunals and public offices of the United States, and of the several States, without any further proof or authentication thereof.”

**ARMENIA**

**Weapons: Proliferation**

*Agreement signed at Washington and Yerevan  
September 3 and 16, 2010;  
Entered into force January 14, 2011.*

**Agreement  
Between  
the Department of Defense  
of the United States of America  
and  
the Ministry of Emergency Situations  
of the Republic of Armenia  
Concerning Cooperation in the Area of  
Prevention of Proliferation of Technology, Pathogens and  
Expertise that Could be Used in the Development of Biological Weapons**

The Department of Defense of the United States of America (Department of Defense) and the Ministry of Emergency Situations of the Republic of Armenia (Ministry of Emergency Situations) hereinafter referred to jointly as the Parties,

Desiring to implement the Agreement Between the Government of the United States of America and the Government of the Republic of Armenia Concerning Cooperation in the Area of the Counterproliferation of Weapons of Mass Destruction, dated July 24, 2000 (hereinafter the Umbrella Agreement), as it pertains to the prevention of proliferation of technology, pathogens, and expertise that could be used in the development of biological weapons,

Have agreed as follows:

**Article I**

1. The Parties are cooperating to prevent the proliferation of technology, pathogens and expertise that could be used in the development of biological weapons.
2. The Department of Defense may provide assistance to the Ministry of Emergency Situations or its designated implementing agents at no cost, in accordance with the terms of this Agreement, to assist the Republic of Armenia in preventing the proliferation of technology, pathogens, and expertise, located at facilities in the Republic of Armenia, that could be used in the development of biological weapons, to enhance capacity to detect, diagnose, and report bioterror attacks and potential pandemics, and to facilitate strategic research partnerships. The Ministry of Emergency Situations and its designated implementing agents shall use all materials, goods, equipment, supplies, technology, training and services provided in accordance with this Agreement for these purposes.
3. This Agreement and all activities undertaken in accordance with this Agreement shall be subject to the provisions of the Umbrella Agreement. In the event of any discrepancies between this Agreement and the Umbrella Agreement, the provisions of the Umbrella Agreement shall prevail.

## **Article II**

1. Each Party to this Agreement shall have the right, following written notification to the other Party, to delegate responsibilities for the implementation of this Agreement to other organizations, departments, agencies or units of their respective governments.
2. To coordinate activities under this Agreement, each Party shall have the right, following written notification to the other Party, to designate technical representatives for materials, training and services provided pursuant to this Agreement.

## **Article III**

1. The total cost to the Department of Defense of all materials, goods, equipment, supplies, technology, training and services provided pursuant to this Agreement and the associated expenses, including the costs related to the transportation of material and personnel, shall not exceed nine million U.S. dollars.
2. Assistance provided by the Department of Defense to the Ministry of Emergency Situations under Article I may include, but is not limited to, cooperative biological research, biological threat agent detection and response, and assistance for improving biological material protection, control and accountability to reduce the risk of theft or unauthorized use of dangerous pathogens in the Republic of Armenia.
3. Pursuant to the terms of this Agreement, the Department of Defense may, at its discretion, provide the Ministry of Emergency Situations with other types of assistance subject to the written agreement of the Parties.

## **Article IV**

1. The Ministry of Emergency Situations will cooperate with the Department of Defense in implementing this Agreement as the assistance referred to in Article I is being provided.
2. The Ministry of Emergency Situations shall coordinate with appropriate ministries and other agencies and organizations within the Government of the Republic of Armenia to ensure that:
  - (a) materials, goods, equipment and supplies provided under this Agreement are afforded priority processing to allow prompt delivery to their ultimate destination within the Republic of Armenia; and
  - (b) appropriate security measures are provided for the Department of Defense representatives, contractors and equipment at those facilities associated with activities under this Agreement.
3. The Ministry of Emergency Situations shall facilitate the examination by the appropriate ministries and other agencies and organizations of the Government of the Republic of Armenia of all materials, goods, equipment and supplies received pursuant to this Agreement and provide confirmation of the acceptability of such materials to the Department of Defense within ten days of receipt of the results of such examinations. Materials, goods, equipment and supplies failing to

conform to agreed specifications shall be returned, at the expense of the Department of Defense, to the Department of Defense through the Embassy of the United States of America in Yerevan within thirty days of receipt for replacement.

4. The Ministry of Emergency Situations and its designated implementing agents shall consolidate and store all dangerous pathogens at the Ministry of Health of the Republic of Armenia laboratory chosen by the Government of the Republic of Armenia in coordination with the Government of the United States of America. Dangerous pathogens placed in the agreed laboratory shall remain there for the duration of the Umbrella Agreement, unless destroyed or their removal is agreed to in writing by the Parties.

5. The Ministry of Emergency Situations or its designated implementing agents shall transfer to the Department of Defense samples of requested dangerous pathogens collected in the Republic of Armenia for prophylactic, protective or other peaceful purposes, and shall share epidemiological data with the Department of Defense in order for the Parties to detect, diagnose and monitor disease outbreaks more effectively in the Republic of Armenia.

6. The Parties shall cooperate annually to develop a joint requirements and implementation plan (JRIP) describing the underlying assumptions, requirements and responsibilities for each project being undertaken pursuant to this Agreement.

#### **Article V**

In addition to the audit and examination rights provided by Article I1 of the Umbrella Agreement, representatives of the Parties shall have the right to evaluate the implementation of terms of contracts and the progress of activities at facilities involved in implementation of this Agreement.

#### **Article VI**

As appropriate, the Parties may enter into additional implementing arrangements or agreements to carry out the provisions of this Agreement. In the case of any inconsistency between this Agreement and any such arrangements or agreements, the provisions of this Agreement shall prevail.

#### **Article VII**


This Agreement may be amended by the written agreement of the Parties and may be terminated by either Party ninety days after written notification to the other Party of its intention to do so. Notwithstanding the termination of this Agreement, the provisions of Article IV, Paragraph 4 of this Agreement shall continue in force for the duration of the Umbrella Agreement.

**Article VIII**


This Agreement shall enter into force on the date the Parties exchange diplomatic notes confirming completion by each Party of all necessary internal governmental procedures required for entry into force, and shall remain in force for the duration of the Umbrella Agreement.

N WITNESS WHEREOF, the undersigned, being duly authorized, have signed this Agreement. DONE at Washington, this 3 day of SEPTEMBER, 2010, and at Yerevan, this 16 day of September, 2010, in duplicate, each in the English and Armenian languages, both texts being equally authentic.

FOR THE DEPARTMENT OF  
DEFENSE OF THE  
UNITED STATES OF AMERICA:



FOR THE MINISTRY OF  
EMERGENCY SITUATIONS  
OF THE REPUBLIC OF ARMENIA.



## ՀԱՍՏԱՅՆԱԳԻՐ

Ամերիկայի Միացյալ Նահանգների  
պաշտպանության դեպարտամենտի  
և

Հայաստանի Հանրապետության  
արտակարգ իրավիճակների նախարարության  
միջև

կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի,  
ախտածինների և փորձառության տարածման կանխարգելման ոլորտում  
համագործակցության մասին

Ամերիկայի Միացյալ Նահանգների պաշտպանության դեպարտամենտը (Պաշտպանության դեպարտամենտ) և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը (Արտակարգ իրավիճակների նախարարություն), այսուհետ՝ Կողմեր,

ցանկություն ունենալով հրագործել Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 24-ին կնքված «Ջանգվածային ոչնչացման զենքի տարածմանը հակազդելու բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համընդգրկուն համաձայնագիր) այնքանով, որքանով այն վերաբերում է կենսաբանական զենքերի ստեղծման համար օգտագործելի տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածման կանխարգելմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

### Հոդված I

1. Կողմերը համագործակցություն են իրականացնում այն տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության տարածումը կանխարգելելու նպատակով, որոնք կարող են օգտագործվել կենսաբանական զենքերի ստեղծման համար:

2. Պաշտպանության դեպարտամենտը կարող է, սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան, անվճար օժանդակություն տրամադրել Արտակարգ իրավիճակների նախարարությունը կամ նրա նշանակած իրականացնող գործակալներին Հայաստանի Հանրապետությունում գտնվող կառույցներում տեղակայված տեխնոլոգիայի, ախտածինների և փորձառության, որոնք կարող են օգտագործվել կենսաբանական զենքերի ստեղծման համար, տարածումը կանխարգելելու գործում Հայաստանի Հանրապետությանը օժանդակելու, և կենսաախաբեկչական հարձակումների և հնարավոր համավարակների հայտնաբերման, ախտորոշման և դրանց մասին տեղեկացման կարողությունն ուժեղացնելու և ջազմավարական հետազոտության ոլորտում գործընկերությունը դյուրացնելու նպատակով: Արտակարգ իրավիճակների նախարարությունը և նրա նշանակած իրականացնող գործակալները սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող բոլոր նյութերը, ապրանքները, սարքավորումները, պարագաները, տեխնոլոգիան, վերապատրաստումը և ծառայությունները պետք է օգտագործեն այդ նպատակներով:

3. Սույն Համաձայնագիրը և դրան համաձայն իրականացվող ողջ գործունեությունը կարգավորվում են Համընդգրկուն համաձայնագրի դրույթներով: Սույն Համաձայնագրի և Համընդգրկուն համաձայնագրի միջև ցանկացած հակասության դեպքում գերակայում են Համընդգրկուն համաձայնագրի դրույթները:



## Հոդված II

1. Սույն Համաձայնագրի յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի մյուս Կողմին գրավոր ծանուցելուց հետո Համաձայնագրի իրականացման պատասխանատվությունը պատվիրակել այլ կազմակերպությունների, գերատեսչությունների, գործակալությունների կամ իրենց պետությունների համապատասխան կառույցներին:

2. Սույն Համաձայնագրի ներքո իրականացվող գործունեությունը համակարգելու համար յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի մյուս Կողմին գրավոր ծանուցելուց հետո նշանակելու սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող նյութերի, վերապատրաստման և ծառայությունների հարցերով տեխնիկական ներկայացուցիչներ:

## Հոդված III

1. Պաշտպանության դեպարտամենտի համար սույն Համաձայնագրին համապատասխան տրամադրվող բոլոր նյութերի, ապրանքների, տարքավորումների, պարագաների, տեխնոլոգիայի, վերապատրաստման ու ծառայությունների ընդհանուր արժեքը և առնչվող այլ ծախսերը, այդ թվում՝ նյութերի և անձնակազմի փոխադրման ծախսերը, չպետք է գերազանցեն ինը միլիոն ԱՄՆ դոլարը:

2. Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր ախտածինների հափշտակման կամ չթույլատրված օգտագործման վտանգը նվազեցնելու նպատակով I հոդվածի համաձայն Պաշտպանության դեպարտամենտի կողմից Արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրված օժանդակությունը կարող է ներառել (և չսահմանափակվել) համատեղ կենսաբանական հետազոտությունների կատարում, կենսաբանական վտանգավոր հարուցիչների հայտնաբերում ու դրանց հակազդում, ինչպես նաև օժանդակություն կենսաբանական նյութերի պաշտպանության, վերահսկման և հաշվետվողականության բարելավման համար:

3. Համաձայն սույն Համաձայնագրի պայմանների՝ Պաշտպանության դեպարտամենտը կարող է Կողմերի գրավոր համաձայնության դեպքում, իր հայեցողությամբ Արտակարգ իրավիճակների նախարարությանը տրամադրել այլ տեսակի օժանդակություն:

## Հոդված IV

1. I հոդվածում նշված օժանդակությունը տրամադրելուն պես Արտակարգ իրավիճակների նախարարությունը սույն Համաձայնագիրն իրագործելիս կհամագործակցի Պաշտպանության դեպարտամենտի հետ:

2. Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է համապատասխան նախարարությունների և Հայաստանի Հանրապետության Կառավարության այլ գործակալությունների ու կազմակերպությունների հետ համակարգված աշխատի երաշխավորելու համար, որ՝

ա) սույն Համաձայնագրով տրամադրվող նյութերը, ապրանքները, տարքավորումները և պարագաները ձևակերպվեն առաջնահերթ կարգով, որպեսզի հնարավոր դառնա դրանց արագ առաքումը դեպի Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող դրանց վերջնական նպատակակետ, և

բ) Պաշտպանության դեպարտամենտի ներկայացուցիչների, կապալառուների, ինչպես նաև սույն Համաձայնագրով նախատեսված գործունեությանն առնչվող կառույցներում գտնվող տարքավորումների համար ապահովվեն անվտանգության անհրաժեշտ միջոցներ:

3. Արտակարգ իրավիճակների նախարարությունը պետք է դյուրացնի համապատասխան նախարարությունների և Հայաստանի Հանրապետության Կառավարության այլ գործակալությունների ու կազմակերպությունների կողմից սույն Համաձայնագրին համապատասխան ստացված բոլոր նյութերի, ապրանքների, սարքավորումների և պարագաների զննումը և հաստատի նման նյութերի ընդունելիությունը Պաշտպանության դեպարտամենտին նշված զննումների արդյունքներն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում: Այն նյութերը, ապրանքները, սարքավորումները և պարագաները, որոնք չեն համապատասխանում նախօրոք համաձայնեցված հատկորոշումներին, պետք է վերադարձվեն Պաշտպանության դեպարտամենտին վերջինիս միջոցներով, Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան միջոցով դրանց փոխարինման մասին ծանուցելուց երեսուն օրվա ընթացքում:

4. Արտակարգ իրավիճակների նախարարությունը և նրա նշանակված իրականացնող գործակալները պետք է համախմբեն և պահեստավորեն վտանգավոր բոլոր ախտածինները Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից ընտրված և Ամերիկայի Միացյալ Նահանգների Կառավարության հետ համաձայնեցված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության լաբորատորիայում: Այն վտանգավոր ախտածինները, որոնք գտնվում են համաձայնեցված լաբորատորիայում, պետք է մնան այնտեղ Համընդգրկուն համաձայնագրի գործողության ընթացքում, եթե դրանք չեն ոչնչացվել, կամ Կողմերի միջև դրանց տեղափոխման վերաբերյալ գրավոր համաձայնություն ձեռք չի բերվել:

5. Արտակարգ իրավիճակների նախարարությունը կամ նրա նշանակված իրականացնող գործակալները պետք է Պաշտպանության դեպարտամենտին փոխանցեն պահանջված այն վտանգավոր ախտածինների նմուշները, որոնք հավաքվել են Հայաստանի Հանրապետությունում պրոֆիլակտիկ, պաշտպանական կամ այլ խաղաղ նպատակներով, և պետք է համաձայնեցված տվյալները տրամադրեն Պաշտպանության դեպարտամենտին, որպեսզի Կողմերն առավել արդյունավետ հայտնաբերեն, ախտորոշեն և վերահսկեն հիվանդությունների բռնկումները Հայաստանի Հանրապետությունում:

6. Կողմերը պետք է համագործակցեն տարեկան կտրվածքով՝ մշակելով համատեղ պահանջների և իրականացման պլան (ՀՊԻՊ), որում կնկարագրվեն սույն Համաձայնագրի ներքո նախաձեռնված յուրաքանչյուր ծրագրի հիմքում ընկած նկատառումները, պահանջները և պարտականությունները:

#### Հոդված V

Ի հավելումն Համընդգրկուն համաձայնագրի 11-րդ հոդվածով սահմանված ստուգման և զննման իրավունքների՝ Կողմերի ներկայացուցիչներն իրավունք ունեն գնահատելու պայմանագրերի պայմանների կատարումը և գործունեության ընթացքը սույն Համաձայնագրի իրականացման մեջ ներգրավված կառույցներում:

#### Հոդված VI

Անհրաժեշտության դեպքում Կողմերը կարող են ձեռք բերել լրացուցիչ իրագործման պայմանավորվածություններ կամ համաձայնություններ՝ Համաձայնագրի դրույթները կատարելու նպատակով: Սույն Համաձայնագրի և նման պայմանավորվածությունների կամ համաձայնությունների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում են սույն Համաձայնագրի դրույթները:

Հոդված VII

Սույն Համաձայնագիրը կարող է փոփոխվել Կողմերի գրավոր համաձայնությամբ, և դրա գործողությունը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի՝ Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մտադրության մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելուց իննսուն օր հետո: Անկախ սույն Համաձայնագրի գործողության դադարեցումից՝ IV հոդվածի 4-րդ կետի դրույթները կշարունակեն ուժի մեջ մնալ Համընդգրկուն համաձայնագրի գործողության ընթացքում:

Հոդված VIII


Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Կողմերը միմյանց դիվանագիտական հայտագրերով կհաստատեն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերն ավարտելու մասին, և շարունակում է ուժի մեջ մնալ Համընդգրկուն համաձայնագրի գործողության ընթացքում:

Ի ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ՈՐԻ՝ ներքոստորագրյալները, լինելով սլատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

ԿԱՏԱՐՎԱԾ է Վաշինգտոնում 2010 թ. ~~SEPTEMBER~~-ի 3-ին և Երևանում՝ 2010 թ. ~~սեպտեմբերի~~ 16-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն, ընդ որում՝ երկու տեքստերն էլ հավասարազոր են:



ԱՐՏՈՒՐ ԲԱԼՑԻԱՆ  
ՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿՈՒՆԻՅ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀՆՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՏՆԱԿՆԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՒՆԻՅ